ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «28» հունիսի 2023 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 16-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 2023/2» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով» և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունիսի 28-ի N 964-Ա/2 հրամանը՝ «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր 2023/2» մրցույթը պատշաճ կազմակերպելու համար:

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Շ.Աղաբեկյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի զետեղումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռ. Ասատրյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացնող գիտական խմբերի համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

3) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով իրազեկումը:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու վարձատրության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

/պարտականությունները կատարող/